ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն,
տնտեսագիտության դոկտոր

_____ Դ.Վ.Հարությունյան
13 հունիսի 2022թ.

# ԿԱՐԾԻՔ
## ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԴԱՎԻԹ ՎԱՀԱՆԻ ՔԱՐԻՄՅԱՆԻ «ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ» » ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ և ՍԵՂՄԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ՝ Ը.00.02 – «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

***Մասնակցում էին՝*** Ռոբերտ Սարինյան՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., Տիգրան Հարությունյան՝ տնտեսագիտ. դոկտոր, Քրիստինե Բաղդասարյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Սվետլանա Դալլաքյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Գրիգոր Մանուկյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Գևորգ Հարությունյան՝ տնտեսագիտ. թեկնածու , Շողեր Պողոսյան՝ տնտեսագիտ. թեկնածու

Պետության կենսաթոշակային համակարգը ապահովում է սոցիալական ապահովության քաղաքականության կարևորագույն գործառույթներից մեկը՝ երաշխավորելով անաշխատունակ մարդկանց համար որոշակի կայուն կենսամակարդակ: Կենսաթոշակային համակարգի արդյունավետ գործունեությունը կառավարության, հասարակության և բիզնեսի սոցիալական և տնտեսական շահերի հավասարակշռության հասնելու և պահպանելու կարևորագույն պայմանն է:

Վերջին տասնամյակների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում բարեփոխվել է բնակչության կենսաթոշակային ապահովման համակարգը: Այս բարեփոխումների անվիճելի ձեռքբերումը կենսաթոշակային համակարգի

կուտակային բաղադրիչի ինստիտուցիոնալ զարգացումն է: Բարեփոխումների արդյունքում Հայաստանի Հանրապետությունում ձևավորվել է կենսաթոշակային բազմաստիճան համակարգ, որն իր մեջ ներառում է բաշխիչ և կուտակային (ապահովագրական) ենթահամակարգեր: Նշված համակարգի զարգացումը բազմաթիվ խնդիրների հետ է բախվում, ինչն էլ պայմանավորում է ատենախոսության թեմայի արդիականությունը:

Ատենախոսության նպատակն է բացահայտել պարտադիր և կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգերում վճարումների պետական սուբսիդավորման արդյունավետ մեխանիզմների ուղիները և մշակել ՀՀ կապիտալի շուկայում, մասնավորապես՝ ենթակառուցվածքային ծրագրերում կենսաթոշակային ֆոնդերի պահանջվող ներդրումային մեխանիզմներն ու գործիքակազմը, ապահովելով ֆոնդերի պահանջվող կայունությունն ու եկամտաբերությունը:

Ելնելով նշված նպատակադրումից լուծման են դրվել հետևյալ խնդիրները.

- ՀՀ-ում պարտադիր և կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմաներում վճարումների պետական սուբսիդիվորման արդյունավետ բարեփոխման մեխանիզմների մշակումը:

- ՀՀ ենթակառուցվածքային ծրագրերում կենսաթոշակային ֆոնդերի ներդրումային մեխանիզմների մշակումն ու զարգացումը:

- ենթակառուցվածքային ՊՄԳ ծրագրերում կենսաթոշակային ֆոնդերի ներդրման գործիքակազմի մշակումը:

Ատենախոսության մոտեցումների և առաջարկների շրջանակում համակարգված և համակողմանիորեն մշակված մեխանիզմներով որպես **գիտական նորույթ են** ներկայացվել հետևյալ դրույթները՝

**1.** Մշակվել է կենսաթոշակային խնայողությունները խթանելու մոտեցում, որը ենթադրում է պետական համաֆինանսավորման պարտադիր կուտակային սխեմայից փուլային փոխանցում կամավորի, և մասնակցի ու նրա գործատուի կողմից մուծումների խթանում կամավոր կենսաթոշակային ապահովագրությանը մասնակցելու պայմանում եկամտահարկի գծով հարկային նվազեցումների սահմանափակումները վերացնելով:

**2.** Մշակվել է պետական-մասնավոր համագործակցության ենթակառուցվածքային ներդրումային նախագծերում կենսաթոշակային ֆոնդի ակտիվների ներդրման մեխանիզմ, որը նախատեսում է ակտիվների արժեթղթավորում՝ օգտագործելով համապատասխան սպասարկման գործիքներ:

**3.** Մեխանիզմներ են մշակվել կենսաթոշակային ֆոնդերի ներդրումների հարկային կարգավորման՝ պետական և մասնավոր համագործակցության համար ակտիվների արժեթղթավորման միջոցով՝ հիմնված միջազգայնորեն ընդունված «հարկային չեզոքության» և արժեթղթավորման գործարքների տրանսֆերային գնագոյացման կարգավորման չափանիշների վրա:

Ատենախոսության հիմնական տեսական դրույթներն ու մեթոդաբանական մշակումները ուղղված են. ա) կուտակային կենսաթոշակային համակարգի պարտադիր և կամավոր բաղադրիչների հարաբերակցության հավասարակշռմանը և բ) կապիտալի շուկայում ներդրումային ակտիվության բարձրացման նպատակով կենսաթոշակային ֆոնդերի ներդրումային գործիքների ներդրմանը: Դրանք իրավասու կարգավորող մարմինների կողմից կարող են օգտագործվել ՀՀ-ում կուտակային կենսաթոշակային . ոլորտում պետական քաղաքականության ռազմավարության, ներդրումների և ֆինանսավորման գործընթացում պետության խթանիչ ձևաչափերի ներդրման և կիրարկման համար: Հետազոտության առաջարկվող մոտեցումներն ու մեխանիզմները կարող են կիրառվել կենսաթոշակային ֆոնդերի կողմից ՀՀ ենթակառուցվածքներում ներդրումներ կատարելու գործընթացում գործնական խնդիրներ լուծելու համար:

## Դիտողություններ աշխատանքի վերաբերյալ

Ատենախոսություն ունի որոշակի թերություններից, որոնցից կցանկանայինք նշել հետևյալները.

1. Առաջին նորույթը վերաձևակերպման կարիք ունի, քանի որ նորույթից պարզ չի հասկացվում, թե հեղինակի կողմից ներկայացված կենսաթոշակային խնայողությունների խթանման առաջարկվող մոտեցմամբ, ինչպե՞ս է կազմակերպվելու և ապահովվելու պետական համաֆինանսավորման պարտադիր կուտակային սխեմայից անցումը կամավոր համակարգին:
2. Երկրորդ գլուխը վերնագրված է «ՀՀ կենսաթոշակային կուտակային համակարգի համեմատական վերլուծություն», սակայն այդ գլխում ներկայացված է կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների («ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ և «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ) համեմատական վերլուծություն, որը այդքան էլ չի արտահայտված գլուխ 2-ի վերնագրում: Նպատակահարմար է, որ գլխի վերնագիրը և ներկայացվող ենթահարցերը համապատասխանեն միմյանց:
3. Ատենախոսության 2.1 ենթահարցում ներկայացված է ՀՀ կուտակային կենսաթոշակային համակարգի ձևավորման ուղին և օրենսդրահավական փոփոխությունները, սակայն վերլուծությունն ամբողջական կլիներ, եթե հեղինակը ներկայացներ տվյալներ՝ կապված ՀՀ գործազրկության մակարդակի, տնտեսապես ակտիվ բնակչության, և առհասարակ, դեմոգրաֆիական վիճակի վերաբերյալ:
4. Ատենախոսության առաջին գլխի 1.3 ենթահարցը վերնագրված է «Կենսաթոշակային ֆոնդերի ազդեցությունը (դերը) երկրի կապիտալի շուկայի զարգացման վրա և տնտեսական աճի վրա», սակայն վերը նշված ենթահարցում ներկայացված չէ ոչ մի տեսակի քանակական և որակական վերլուծություն, հաշվարկ կամ կոռելացիոն և/կամ ռեգրեսիոն վերլուծություն, որտեղ հիմնավորված կլիներ կենսաթոշակային ֆոնդերի ազդեցությունը տնտեսական աճի վրա: Աշխատանքը կշահեր, եթե առկա լիներ վերլուծական մոտեցում՝ կապված տնտեսական աճի վրա կենսաթոշակային ֆոնդերի

ազդեցության հետ վերափոխել 3.1 ենթահարցի վերնագիրը՝ համապատասխանեցնելով ներկայացված բովանդակությանը:

5. Ատենախոսության մեջ գրականության ցանկը ներկայացվել է այբբենական կարգով, սակայն բացակայում են հղումների համարներ տեքստում, որը անհրաժեշտ պայման է և հանդիսանում է ԲՈԿ-ի ատենախոսության ձևավորման պահանջներից՝ https://www.bok.am/sites/default/files/inline-files/aten_dzev.pdf
6. Ատենախոսության մեջ կան հղումներ (58, 59 և այլն), որոնք արված են լատվական կայքերին, փոխարենը աշխատանքի գիտականությունը ապահովելու համար հղումները ցանկալի էր անել Կառավարության պաշտոնական կայքին կամ ՀՀ օրենսդրական կարգավորումները ներկայացնող կայքերին:
7. Հեղինակն ատենախոսության մեջ մի քանի տեղ շեշտադրում է 44- օրյա պատերազմի և COVID-19 համավարակի ազդեցությունը կուտակային կեսաթոշակային համակարգի զարգացման վրա, սակայն ցանկալի կլիներ, որ հեղինակը ներկայացներ մոտավոր կանխատեսումներ՝ դիտարկված գործոնների ազդեցության աստիճանի հետ կապված:
8. Հեղինակն երկրորդ նորույթում անդրադարձել է պետություն մասնավոր հատված համագործակցության ակտիվացման մեխանիզմներին, սակայն պատշաճ կերպով չի դիտարկել մակրո և միկրո մակարդակներում կորպորատիվ կառավարման որակի բարելավման հիմնախնդիրները:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Վահանի Քարիմյանի թեկնածուական ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն: Հեղինակը հանդես է բերել մասնագիտական և վերլուծական անհրաժեշտ մակարդակ, ինչի մասին են վկայում բուն ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները:

Ներկայացված սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և ընդգրկում է աշխատանքի կարևորագույն դրույթներն ու

արդյունքները: Հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են հրապարակված ութ գիտական աշխատանքներում:

Այսպիսով՝ Դավիթ Վահանի Քարիմյանի «Կուտակային կենսաթոշակային ապահովագրության համակարգի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (13.06.2022թ., արձանագրություն թիվ 18):

**ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան**
**տնտեսագիտության ինստիտուտի**
**գիտ. աշխատող**
**տնտեսագիտ. թեկնածու** **Ս.Դալլաքյան**

**ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան**
**տնտեսագիտության ինստիտուտի**
**ավագ գիտ.աշխատող տնտեսագիտ. թեկնածու** **Շ.Պողոսյան**

*Տնտեսագիտ. թեկնածուներ Ս.Դալլաքյանի և Շ.Պողոսյանի ստորագրությունների «իսկությունը» հաստատում եմ՝*

**ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան**
**տնտեսագիտության ինստիտուտի գիտ.քարտուղար**
**տ.գ.թ., դոցենտ** **Ք.Բաղդասարյան**
**Կ.Տ.**
**13.06.2022թ.**